ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 81-Ա

«18» մարտի 2019 թվական գյուղ Ամասիա

ԿԱՐԻՆԵ ԺՈՐԱՅԻ ԱՎԵՏԻՍՅԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱՅԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԿԱՑՈՒԹՅԱՆ ԱԿՏԵՐԻ ԳՐԱՆՑՄԱՆ ԱՄԱՍԻԱՅԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԲԱԺՆԻ ՊԵՏԻ /ԾԱԾԿԱԳԻՐ 1.3-1/ ՊԱՇՏՈՆՈՒՄ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ, ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԴԱՍԱՅԻՆ ԱՍՏԻՃԱՆ ՇՆՈՐՀԵԼՈՒ ԵՎ ՆՐԱ ՀԵՏ ԿՆՔՎԱԾ ԺԱՄԿԵՏԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետի, 59-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի 3-րդ ենթակետի, 2-րդ և 5-րդ մասերի, 15-րդ հոդվածի 1-ին մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի հուլիսի 13-ի թիվ 1002-Ն որոշմամբ հաստատված «Ժամկետային աշխատանքային պայմանագիր կնքելու կարգի» 21-րդ կետի 1-ին ենթակետի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիայի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության մրցութային հանձնաժողովի 2019 թվականի մարտի 14-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիայի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքացիական կացության ակտերի գրանցման Ամասիայի տարածքային բաժնի պետի /ծածկագիր՝ 1.3-1/ թափուր պաշտոնը զբաղեցնելու համար անցկացված մրցույթի արդյունքում հաղթող ճանաչելու մասին» եզրակացությունը և Կարինե Ժորայի Ավետիսյանի 2019 թվականի մարտի 15-ի դիմումը՝

ո ր ո շ ու մ եմ

1. Կարինե Ժորայի Ավետիսյանին 2019 թվականի մարտի 18-ից նշանակել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիայի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքացիական կացության ակտերի գրանցման Ամասիայի

տարածքային բաժնի պետի /ծածկագիր՝ 1.3-1/ պաշտոնում՝ լուծելով նրա հետ կնքված Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիայի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքացիական կացության ակտերի գրանցման Ամասիայի տարածքային բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատարի ժամկետային աշխատանքային պայմանագիրը:

2. Աշխատավարձը՝ ըստ սահմանված պաշտոնային դրույքաչափի:
3. Կարինե Ժորայի Ավետիսյանին շնորհել Հայաստանի Հանրապետության համայնքային ծառայության 2-րդ դասի խորհրդական դասային աստիճան:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՋԵՄՄԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

«18» մարտի 2019 թվական
գյուղ Ամասիա